

Դավիթ Գյուրջինյան

Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան

ԹՎԻ ԿԱՐԳԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԿՈՐՊՈՒՍՈՒՄ

Ժամանակակից արևելահայերենի կորպուսում անուն խոսքի մասերից գոյականների և ածականների, մասամբ նաև դերանունների և թվականների մի քանի խմբեր թվի կարգի ներկայացման հետ կապված որոշ դժվարություններ կարող են ունենալ:

Որո՞նք են այդ խմբերը, որո՞նք են այդ դժվարությունները և դրանց հաղթահարման ուղիները,- ահա այս և հարակից այլ հարցերի պատասխանը պիտի փորձենք տալ ստորև:

1. Միավանկ բառեր: Գրական արևելահայերենում միավանկ գոյականները հոգնակի թվի կազմության ժամանակ ստանում են **-եր** վերջավորությունը, ընդ որում արմատական **ի** և **ու** ձայնավորները շեշտազրկվելով սովորաբար հնչյունափոխվում են **ը**-ի, ինչպես՝ **բիծ - բծեր, լինդ - լնդեր, զունդ - զնդեր, քուրդ - քրդեր, բումբ - բմբեր**: Բայց ահա մի շարք միավանկ բառերի հոգնակին կազմելիս **ի** և **ու** ձայնավորների հնչյունափոխություն տեղի չի ունենում, ինչպես՝ **կիրճ - կիրճեր, ծիլ - ծիլեր, բուրբ - բուրբեր, փուփ - փուփեր, ռումբ - ռումբեր** և այլն: Այստեղ որևէ խնդիր կարծես թե չունենք:

Փոխառյալ բառերի **ի** և **ու** ձայնավորները որպես կանոն չեն հնչյունափոխվում՝ **քիմ - քիմեր, պիկ** «սրածայր լեռնագագաթ» - **պիկեր**, իսկց. **փիր** «հրածգարան» - **փիրեր, բինս** «վիրակապ» - **բինսեր**: Սրանց հնչյունափոխությունը բարբառային է և մերժելի, ինչպես՝ **բլր/նպեր, փլր/րեր**: Այդպես էլ՝ **փիկ - փկեր** (փոխանակ՝ **փիկեր**), **լինգ - լնգեր** (փոխանակ՝ **լինգեր**) և այլն:

Որոշ դեպքերում միավանկ բառերի հոգնակիի զուգաձևություն կա. նրանք հանդես են գալիս հնչյունափոխված և անհնչյունափոխ տարբերակներով: Այսպես՝ **բում - բմբեր // բումբեր, սուրբ - սրբեր // սուրբեր, խուց - խցեր // խուցեր, ճիպր - ճպրեր // ճիպրեր, ցլեր // ցուլեր** և այլն:

Նախընտրելի են առաջին ձևերը, սակայն ժամանակակից արևելահայերենի ներկա փուլում որոշ բառերի դեպքում չհնչյունափոխելու միտում է նկատվում, որը հաճախ արտալեզվական գործոններով է բացատրվում: Օրինակ՝ **սուրբեր** ձևը կազմելու մեջ ոչ միայն արևմտահայերենի ազդեցությունը կա, այլև այս ձևը նախընտրողներին թվում է, թե իրենք այդպես «չեն աղավաղում» բառը, նրա արտաքին ձևավորումը:

Այլ դեպքերում դեր է խաղում ոմանց ռուսական կրթությունը. նրանք ևս փորձում են «ամխաթար պահել» բառը (**ու - ը** հնչյունափոխությունից խուսափելու պատճառը թերևս այն է, որ ռուսերենն **ը** հնչյուն չունի, որն էլ դժվարացնում է արտասանությունը):

Կարելի է այսպես ասել. մի կողմից արևմտահայերենի և այլ գործոնների ազդեցությամբ արմատական ձայնավորը չհնչյունափոխելու միտում կա, իսկ մյուս դեպքում խոսակցական լեզվի և որոշ բարբառներ ազդեցությամբ հնչյունափոխվում են անգամ փոխառյալ բառերը:

Մեր կարծիքով՝ ձևաբանական մորմով անթույլատրելի ձևերը արևելահայերենի կորպուսում պիտի արձանագրել համապատասխան նշումով, միաժամանակ հղում տալ կանոնական ձևին: Անշուշտ, այս կամ այն ձևի գործածությունն իրողություն է, բայց կորպուսից օգտվողին թերևս կարելի է հուշել, օրինակ, որ հանդիպած թե՛ **քուրմեր**, թե՛ **քրմեր** ձևերը մորմատիվ են, իսկ **քեռեր**, **գառեր** ձևերը՝ ոչ:

Մեզ համար հստակ չէ, թե հայերենի կորպուսում առհասարակ գուգաձևությունների խնդիրն ինչպես է լուծվելու: Մեր կարծիքով՝ սոսկ արձանագրելը դեռևս մեկ քայլ է:

Բառավերջում **ու** ունեցող բառերից գուգաձևություն ունի **բու** -ն՝ **բվեր** և **բուեր**:

Այս խմբի բառերի մեջ առանձնանում է **անչ**-ը: Սրա հոգնակին լինում է **անչեր**, բայց ավելի շատ գործածվում է գրաբարյան քարացած ձևը՝ **անչինք**:

Մի շարք միավանկ բառերի հոգնակին կազմելիս վերականգնվում է գրաբարում նրանց ունեցած **ն** վերջնահնչյունը (**քեռ**, **գառ**, **դուռ**, **եզ**, **թոռ**, **լեռ**, **ծոռ**, **ծունկ**, **հարս**, **ջուկ**, **մապ**, **մուկ**, **նուռ**):

Նույն ձևով է կազմվում բարբառային **կուռ** բառի հոգնակին՝ **կռներ**: Ժողովրդական լեզվին բնորոշ **չեռ** և **ոպ** բառերի հոգնակին լինում է **չեռներ**, **ոպներ**: Գրական լեզվի համար վերջիններս ընդունելի չեն:

Ողներ և **ռունգներ** ձևերն այժմ անգործածական են. նրանց փոխարեն հանդես են գալիս **ողեր** և **ռունգեր**//**ռնգեր** ձևերը:

Երբ բառի վերջնաբաղադրիչը գրաբարում **ն** վերջնահնչյուն ունեցած միավանկ բառ է, հոգնակին կրկին **-ներ** վերջավորությամբ է կազմվում, ինչպես՝ **շնաշուկ** - **շնաչկներ**, **ուղեբեռ** - **ուղեբեռներ**, **քաղաքադուռ** - **քաղաքադռներ**, **դաշտամուկ** - **դաշտամկներ**: Կան բացառություններ՝ **ջրահարս** - **ջրահարսեր**, **հավերժահարս** - **հավերժահարսեր**: Իհարկե, լինում են նաև **-ներ**-ով կազմելու դեպքեր (**ջրահարսներ**, **հավերժահարսներ**. հմմտ. **հարսներ**), սակայն դրանք տարածված ձևեր չեն:

Այս տեսակ որոշ բառերում գուգաձևություն է առկա, ինչպես՝ **ցուցամապ** - **ցուցամապեր**//**ցուցամապներ**:

Միավանկ գոյականներից միակը **ռուս** բառն է, որն ստանում է **-ներ** վերջավորությունը՝ **ռուսներ** (**ռսներ** ձևը խոսակցական է և մերժելի):

2. Միավանկ վերջնաբաղադրիչով բաղադրյալ բառեր: Միավանկ վերջնաբաղադրիչով գոյականների հոգնակիի կազմության ժամանակ հանդես է գալիս **-եր** մասնիկը, երբ այդ բաղադրիչը գոյական է և բաղադրության մեջ պահպանում է իր հիմնական՝ առարկայական նշանակությունը, ինչպես՝ **ցուցափեղիկ** - **ցուցափեղիկեր**, **արոտավայր** - **արոտավայրեր**, **գորամաս** - **գորամասեր**:

Հորաքույրեր, **մորաքույրեր** ձևերի փոխարեն խոսակցական լեզվում գործածում են **-ներ**-ով կազմվածները, որոնք կանոնական չեն: Հմմտ. **բուժքույրեր**, **արքայաքույրեր**:

Երբ միավանկ վերջնաբաղադրիչը բայարմատ է և հանդես է գալիս բայական նշանակությամբ (գործողություն կատարողի, տվյալ վիճակի մեջ եղողի), հոգնակին կազմվում է **-ներ** մասնիկով: Օրինակ՝ **փայտահար** - **փայտահարներ**, **նորածին** - **նորածիններ**, **ժամացույց** - **ժամացույցներ** և այլն:

Երբեմն միավանկ վերջնաբաղադրիչը բայի իմաստ ստացած գոյական է լինում և հոգնակին կազմելիս կրկին –**ներ** վերջավորություն է ստանում: Օրինակ՝ **մեծապուն** (= *մեծ պուն ունեցող, այսինքն՝ հարուստ, ունևոր*) – **մեծապուններ**:

Այս բառերը կամ գոյական, կամ ածական են (և կամ նույն բառը համատեղում է երկու արժեքներն էլ), ինչպես՝ **սկանապես** - **սկանապեսներ**, **բանապահ** - **բանապահներ**, **գնդացիր** - **գնդացիրներ**, **դավադիր** - **դավադիրներ**, **պարմագիր** - **պարմագիրներ**, **հեռուստացույց** - **հեռուստացույցներ**, **չարամիտ** - **չարամիտներ**, **ավանդապահ** - **ավանդապահներ**:

Գոյական միավանկ վերջնաբաղադրիչով ածականների հոգնակին առհասարակ կազմվում է –**ներ** վերջավորությամբ, ինչպես՝ **չարասիրտ**, **բարչրաքիթ** (*մարդիկ*) - **չարասիրտներ**(ը), **բարչրաքիթներ**(ը), **գրահապատ** (*մեքենաներ*) - **գրահապատներ**(ը):

Մի շարք դեպքերում միևնույն վերջնաբաղադրիչն է, բայց հոգնակին կազմվում է տարբեր վերջավորություններով, քանի որ այդ բաղադրիչը մերթ գոյականական, մերթ էլ բայական նշանակություն են արտահայտում: Օրինակ՝ **դեղաչափ** «դեղի այն չափը, որ նախատեսված է միանգամից ընդունելու համար», «տվյալ բաղադրության մեջ մտնող յուրաքանչյուր նյութի չափը» - **դեղաչափեր**, **հողաչափ** «հողաբաժանության համար օգտագործելի հողերը չափող և սահմանագծող մասնագետ» - **հողաչափներ**: Այդպես էլ՝ **նստացույց** - **նստացույցեր**, **կողմնացույց** - **կողմնացույցներ**, **խնդրագիր** - **խնդրագրեր**, **հեքիաթագիր** - **հեքիաթագիրներ**, **առանձնապուն** - **առանձնապուներ**, **մեծապուն** - **մեծապուններ** և այլն:

Երբ միավանկ վերջնաբաղադրիչի իմաստը հստակ չի գիտակցվում կամ այլ իմաստով է գործածվում (և կամ սերտաճած է լինում նախորդ բաղադրիչին), բառը սովորաբար ստանում է –**ներ** վերջավորությունը: Օրինակ՝ **քղանցք** - **քղանցքներ**, **բնչուղի** - **բնչուղիներ**, **տեսակետ** - **տեսակետներ**, **տարդեղ** - **տարդեղներ** և այլն: Այդպես էլ՝ **դիտանցք** - **դիտանցքեր**, **հորապանցք** - **հորապանցքեր**, բայց՝ **լեռնանցք** - **լեռնանցքներ**, **միջանցք** - **միջանցքներ**, **նրբանցք** - **նրբանցքներ**:

Որոշակի է, որ մի շարք բառերի (ավելի ճիշտ՝ վերջնաբաղադրիչների) պարագայում հստակ կանոնակարգում չունենք, և բառարանները հոգնակիի տարբեր ձևեր են ներկայացնում: Օրինակ՝ **լեռնացք** բառի համար մի դեպքում տրվում է **լեռնանցքեր** ձևը, մյուս դեպքում՝ **լեռնանցքներ**:

Սակայն որոշ իրողություններ կարելի է հստակ արձանագրել. այսօր առավելաբար –**ներ** վերջավորությամբ են կազմում –**նիշ** և –**պետ** վերջնաբաղադրիչներով բաղադրությունների հոգնակին, ինչպես՝ **ախպանիշներ**, **դրոշմանիշներ**, **խորհրդանիշներ**, **հայտանիշներ**, **հատկանիշներ**, **չափանիշներ**, **ցուցանիշներ**, **բանապետներ**, **գնդապետներ**, **հազարապետներ**, **համայնքապետներ**, **մարզպետներ**, **միապետներ**, **նահանգապետներ**, **վարչապետներ**, **քաղաքապետներ**: Իհարկե, **գյուղապետեր**, **պահեստապետեր** և նման ձևերը միանգամայն ճիշտ են, սակայն ցանկալի է նույնական մոտեցում կիրառելը: Առհասարակ այս կարգի բառերի հոգնակին –**ներ** մասնիկով կազմելու միտում կա:

Ժամանակակից հայերենի կորպուսում, բնականաբար, արձանագրվելու են գույգ ձևերն էլ, սակայն առաջնայնության, վերաբերմունք դրսևորելու խնդիր, այնուամենայնիվ, քվում է, թե կա:

3. Մեկուկեսականի բառեր: Այն երկական բառերը, որոնք վերջանում են գաղտնավանկով, հոգնակին կազմելիս ստանում են **-եր** մասնիկը, ինչպես՝ **կայս / ը / յր – կայսեր**: Սրանք այսպես կոչված մեկուկեսականի բառերն են (գոյական և ածական)՝ **դուստր - դուստրեր, արկղ - արկղեր, աստղ - աստղեր, մանր – մանրեր, կարծր – կարծրեր, քաղցր – քաղցրեր**:

Երբ բառի վերջնաբաղադրիչը այս կարգի բառ է, հոգնակին կրկին կազմվում է **-եր** վերջավորությամբ, ինչպես՝ **տոմսարկղ - տոմսարկղեր, դրամարկղ - դրամարկղեր, գիսաստղ - գիսաստղեր, արքայադուստր - արքայադուստրեր, գիշանգղ - գիշանգղեր**:

Հայերենագետներից ոմանք ճիշտ են համարում **տոմսարկղներ, դրամարկղներ** և նման ձևերը:

Մեկուկեսականի որոշ բառեր հատկապես խոսակցական լեզվում հանդես են բերում գուգաձևություններ: Հոգնակիի գուգաձևություններ նկատվում են նաև դասական գրողների լեզվում, տարբեր բառարաններում, ինչպես՝ **անգղեր // անգղներ, կայսեր // կայսրներ**:

Ի դեպ, **-ներ** մասնիկով որոշ ձևեր ընդհանրանալու միտում ունեն: Կարելի է ասել, որ, օրինակ, **գամփռներ** ձևը կայունացել է:

Սկ, սպ, սպ, սք, սք, սփ, գք, գգ, շպ բաղաձայններով սկսվող և դրանցից առաջ թույլ **ք** ունեցող երկական բառերը ևս ստանում են **-ներ** վերջավորությունը, ինչպես՝ **սպինք - սպինքներ, սպա - սպաներ** և այլն: Այդպես էլ որոշ փոխառյալ բառերի դեպքում՝ **բլոկ - բլոկներ, շփար - շփարներ**: Մամուլի և հեռուստատեսության լեզվում հանդիպում են **բլոկեր, շփարեր** ձևերը (խոսակցականում՝ **սպաներ**), որոնք կարելի է որակել իբրև սխալ:

Դպրոցական ուսուցման մեջ գրեթե կայունացած այս ձևերը կորպուսում առանց **անհանձն** կամ նման այլ նշումի արձանագրելով, մեր կարծիքով, վնաս կհասցնենք հայերեն խոսքի մշակույթին:

4. Բազմիմաստ բառեր, որոնց հոգնակին տարբեր ձևերով է կազմվում: Երբեմն միևնույն բառն է այս կամ այն իմաստի թելադրանքով տարբեր վերջավորություններ ստանում: Օրինակ՝ **պարսավազիր** բառը «հրապարակախոսական երկ, որ բնութագրվում է որևէ անձի, հասարակական երևույթի սուր ծաղրով. պամֆլետ» (այսինքն՝ **պարսավական գիր՝ գրություն**) իմաստով գործածվելիս հոգնակի թվում ստանում է **-եր** վերջավորությունը, իսկ «պամֆլետի հեղինակ» և «մեկի դեմ պարսավական բան գրող անձ» (այսինքն՝ **պարսավազիր գրող**) իմաստներով գործածվելու ժամանակ՝ **-ներ՝ պարսավազիրներ**:

Կամ էլ՝ **սրբազիր** «սրտի աշխատանքը գրառող սարք» - **սրբազիրներ** և **սրբազիր** «սրտի աշխատանքի գրառումը՝ պատկերը՝ գծագիրը» - **սրբագրեր, նախազարդ** «նախշերով արված զարդ» (գոյական է) - **նախազարդեր** և **նախազարդ** «նախշերով զարդարված» (ածական է) - **նախազարդներ**: **Ջրանցք** բառի հոգնակին լինում է **ջրանցքներ**, երբ գործածվում է իր հիմնական՝ «արհեստական մեծ հուն ջրի համար» նշանակությամբ, խիստ հազվադեպ, մասնավորապես տեխնիկական գրականության մեջ, կարող է հանդիպել **ջրանցքեր** ձևը, երբ գործածվում է երկրորդ՝ «ջրի անցք՝ ծակ» նշանակությամբ:

Մի շարք անհոգնական բառեր հոգնակի թիվ ունենում են միայն այս կամ այն բառային նշանակությամբ գործածվելիս: Այսպես, **առաքելություն** բառն անհոգնական է, բայց իբրև «ներկայացուցչություն» նշանակությամբ

դիվանագիտական տերմին կարող է գործածվել հոգնակի թվով: **Ոսկի** բառն իբրև քիմիական տարրի անվանում անհոգնական է, բայց «ոսկեդրամ» կամ «ոսկյա զարդերի ընդհանուր անվանում» նշանակությամբ կարող է հոգնակի թվով գործածվել:

Արդյոք պիտի բավարարվե՞լ միայն **հոգն.** նշումով, թե՞ տվյալ բառագործածության համար համապատասխան իմաստը ևս նշել:

5. Համանուն բառեր, որոնց հոգնակին տարբեր ձևերով է կազմվում: Եզակի դեպքերում տարբեր մասնիկներ են ստանում համանուն բառերը, ինչպես՝ **մայր** «մարդու ձեռքի և ոտքի թաթի հինգ վերջավորություններից յուրաքանչյուրը» - **մայրներ**, **մայր** «խաղողի վազի ոստ» - **մայրեր**: Կամ՝ **կոշկակար** «կոշիկ կարող արհեստավոր» - **կոշկակարներ**, **կոշկակար** «կոշիկի կար» - **կոշկակարեր**, **գիշերապահ** «գիշերային պահակ՝ պահապան» - **գիշերապահներ**, **գիշերապահ** «գիշերվա պահ, գիշեր ժամանակ» - **գիշերապահներ**: Այս պարագայում բառիմաստների ներկայացումը կարևոր է:

6. Ժողովրդախոսակցական և հնացած ձևեր: **-Ացի, -եցի, -ցի** վերջածանցներով գոյականների հոգնակին երբեմն կազմվում է **-ք** մասնիկով, ինչպես՝ **ախալքալարցի** - **ախալքալարցիք**, **ֆրանսիացի** - **ֆրանսիացիք**, **լոռեցի** - **լոռեցիք**, **փնեցի** - **փնեցիք**: Սրանք բնորոշ են ժողովրդախոսակցական լեզվին և արդի գրական լեզվում հանձնարարելի չեն (չնայած որ հանդիպում են նաև գեղարվեստական գրականության և մամուլի լեզվում):

-Ք մասնիկով հոգնակիի որոշ ձևեր բարբառային են, ինչպես՝ **ճամփա** - **ճամփեք**, **փեսա** - **փեսեք**, **սալամա** - **սալամեք**:

Գրական լեզվում մերժելի են նաև **-երք** մասնիկով **սղերք**, **աղջկերք** ձևերը: Սակայն հիշյալ ձևերը գեղարվեստական գրականության մեջ կարող են գործածվել ժողովրդայնության երանգով:

-Ք-ով որոշ ձևեր էլ հնացած են, ինչպես՝ **որդի** - **որդիք**, **սղա** - **սղայք**, **նախնի** - **նախնիք**, **եղբայր** - **եղբայրք**: Գեղարվեստական գրականության լեզվում սրանք գործածվում են իբրև քերականական հնաբանություններ:

Վերոհիշյալ բոլոր բառերի հոգնակին արդի գրական արևելահայերենում որպես կանոն կազմվում է **-ներ** մասնիկով: Արդ, տարբերակված մոտեցում արդյոք անհրաժե՞շտ է: Եթե կորպուսն ընդգրկում է Բաֆֆի, Պռոշյան և ուրիշներ, հնացած, ժողովրդական ձևերի առկայությունն անխուսափելի է, և դա էլ իր հետ մի շարք հարցեր է բերում: Հետևել ակադեմիական և այլ բառարաններին և կիրառել **հնգ.**, **ժող.** և այլ նշումներ:

-Ք մասնիկով է կազմվում **այլ** անորոշ դերանվանի հոգնակին՝ **այլք**: Շատ հաճախ կազմում են միանգամայն սխալ **այլորք** ձևը (**այլք**-ի սեռականի **այլոց** ճիշտ ձևի ազդեցությամբ), որի գրավոր տասնյակ գործածություններ կարող ենք բերել: Այս ձևը եթե անգամ սարդի հայերենի կորպուսի մեջ, ապա **հոգն.** նշումի կողքին անշուշտ պիտի ավելացվի **սխալ**:

Մի շարք դերանուններ ունեն հոգնակի ուղղականի զուգաձևություններ՝ **-ներ** և **-ք** մասնիկներով: Այսպես, **այդպիսի** - **այդպիսիները** // **այդպիսիք**, **այնպիսի** - **այնպիսիները** // **այնպիսիք**, **նույնպիսի** - **նույնպիսիները** // **նույնպիսիք**, **ինչպիսի** - **ինչպիսիները** // **ինչպիսիք**, **որպիսի** - **որպիսիները** // **որպիսիք**, ընդ որում **-ք** մասնիկով ձևերը չեն հոլովվում: Այս զուգաձևությունների համար փոխադարձ

հղումներ են հարկավոր, որովհետև գործածություններն են տարբեր (ըստ տեքստի ոճի և նախադասությունների կառուցվածքի):

7. Անհոգնական բառեր: Արդի հայերենում ոչ հաշվարկելի գոյականները սովորաբար միայն եզակի թվով են գործածվում: Դրանց թվին են պատկանում՝ բնության մեջ մեկ՝ միակ առարկաների անունները (**լուսին, արևելք**), վերացական գոյականները (**զղջում, բերկրանք, խաղաղություն**), հավաքական գոյականները (մասնավորապես **-եղեն, -ուքյուն** վերջածանցներով կազմվածները՝ **փեսականի, սպիտակեղեն, երիտասարդություն**), գիտությունների, ուսմունքների, տնտեսաձևերի, արվեստի ուղղությունների անունները (**հանրահաշիվ, քրիստոնեություն, պլապոնականություն**), **-ուքյուն** վերջածանցով այն բառերը, որոնք արհեստ, մասնագիտություն, տնտեսության ճյուղ են նշանակում (**դարբնություն, հողագործություն, գինեգործություն, հանքարդյունաբերություն**), տարբեր խաղերի, մարզաձևերի անունները (**շախմատ, լող, վազք**), նյութերի անունները, քիմիական տարրերի անունները, ինչպես՝ (**օդ, արձիճ, պողպատ, ազոտ**), լեզուների անունները (**արաբերեն, հայերեն, հունարեն**): Վերջիններս հոգնակի թվով կարող են գործածվել միայն փոխանվանական կիրառության դեպքում:

Համոզված ենք, որ համապատասխան բառաձևի համար ոճական նշում պիտի արվի, այլապես հատկապես հայերենի ոչ քաջածանոթ մեկը սխալ եզրակացություն պիտի անի:

-Ուքյուն և **-ում** ածանցներով կազմված բայանուն գոյականները, որոնք եթե թանձրացական նշանակություն են ունենում կամ ցույց են տալիս տվյալ հատկանիշի մեկից ավելի դրսևորումը, գործածվում են հոգնակի թվով, ինչպես՝ **հուզում - հուզումներ, կամայականություն - կամայականություններ, ցանկություն - ցանկություններ, հիշողություն - հիշողություններ, գիտություն - գիտություններ** և այլն:

Սխալ են **ամանեղեններ, խմորեղեններ, դեղորայքներ, փեսականիներ** և նման ձևերը:

8. Անեզական կամ առավելաբար հոգնակիով գործածվող բառեր: Հասարակ անուններից կարելի է նշել միայն մեկ-երկուսը, որոնք կա՛մ միայն հոգնակի թվով են գործածվում, կա՛մ էլ հիմնականում հոգնակիով են հանդիպում (չնայած որ եզակին ունեն): Այն պատճառով, որ բազմակիության կամ երկակիության իմաստ են արտահայտում: Օրինակ՝ **նոթեր, կուլիսներ, քարթիչներ, խոպուպներ, խոփկներ:**

Գանգուրներ գոյականը եզակիով չի գործածվում. առանց հոգնակիակերտ մասնիկի ձևն ածական է:

Արդի արևելահայերեն գիտական խոսքում, գերազանցապես հոգնակի թվով են գործածվում բույսերի և կենդանիների տիպերի, դասերի, կարգերի, տեսակների, որոշ հանքատեսակների, քիմիական նյութերի խմբերի անվանումները, ինչպես՝ **շուշանագգիներ, սմբակավորներ, բառափանմաններ, ստալակփրիդներ, ռիբոսոմներ:**

Նկատելի է, որ նմանատիպ բազմաթիվ բառեր գործածվում են առանց հոգնակիակերտ վերջավորությունների, ինչպես՝ **երկկենցաղ - երկկենցաղներ, պարկավոր - պարկավորներ, վարդագգի - վարդագգիներ:** Այդ ձևերը, սակայն, գոյականներ չեն, այլ ածականներ, որոնք գոյականների են վերածվում **-ներ**

մասնիկի միջոցով: **-Ներ-**ը փաստորեն բառակազմական-քերականական մասնիկ է: Բառարաններն էլ այդ բառերը տալիս են հոգնակիի ձևով:

Այդպես է նաև որոշ ազգերի (հատկապես անհետացած) անունների պարագայում, օրինակ՝ **արմեններ, մարեր, հոներ, խեթեր, գալլեր, գոթեր** և այլն:

Որոշ բառեր գրեթե միշտ հոգնակիի ձևով են հանդես գալիս այս կամ այն իմաստի ձեռքբերման և դրա հետևանքով խոսքիմասային փոխանցման դեպքում: Օրինակ՝ **կանաչներ** «բնապահպաններ» (**կանաչ** ածականից), **կարմիրներ** «սոցիալիստական հեղափոխության ուժեր», **աջեր, չախեր**: Ակնհայտ է, որ խոսքիմասային անցում է տեղի ունեցել, և ածականի հոգնակին ձեռք է բերել գոյականի արժեք: Եթե նշում ենք **գոյական, հոգնակի թիվ**, ստացվում է, որ եզակին ևս գոյական է, այնինչ իրականում այդպես չէ: Այս դեպքում ճիշտ կլինի նշել **անեզական գոյական**, բայց իմաստի և ձևաբանական արժեքի արձանագրումը կարևոր է: Մյուս ելքն այն է, որ որակական ածականների կողքին նշվեն հոգնակիի հնարավոր ձևերը (չնայած որ այդ դեպքում բառային արժեք ստացածների հարցում կորուս կունենանք);

-Անք, -ենք, -ոնք, -ունք վերջածանցներով բառերը, ինչպես՝ **պապոնք, քապոնք** հավաքականության իմաստ են արտահայտում և անեզական են: Այս ածանցներով որոշ ձևեր ժողովրդախոսակցական կամ բարբառային են, ինչպես՝ **խնամոնք, քեռոնք, աներանք** կամ էլ, ասենք, **դապավորենք**: Կրկին նույն հարցադրումն է՝ բարբառային կամ այլ շերտերի նկատմամբ որևէ վերաբերմունք պիտի դրսևորվի՞, թե՞ ոչ: Օրակարգային է նաև հատուկ անուններից կազմվածների հարցը. **Վարդանանք** բառի կողքին ունենք **Վարդանենք, Գրիգորենք** և այլն:

9. Ոճական հոգնակի: Մի շարք դեպքերում անհոգնական գոյականները գործածվում են հոգնակի թվով: Դրանք ոճական և իմաստային այլևայլ դրսևորումներ ունեն:

Նյութերի անունները սովորաբար հոգնակի թիվ չեն ունենում: Այս բառերը հոգնակի թվով գործածվում են այն ժամանակ, երբ ցույց են տալիս դրանց տարբեր տեսակները կամ միևնույն տեսակը՝ հաշվարկելի ձևով: Օրինակ՝ **գինիներ (հալկական, ֆրանսիական, քաղցր, կիսաքաղցր, քիչիս)**: **Ջրեր** հոգնակին կարող է նշանակել թե՛ ջրի զանազան տեսակներ և թե՛ ջրի մեծ քանակություն:

Երևույթների անունների հոգնակին ցույց է տալիս տվյալ երևույթի հաճախակի կրկնությունը, պարբերականությունը՝ **անչրկներ, շոգեր, ցրտեր**:

Հոգնակի թիվ չունեն շաբաթվա օրերի (շաբաթվա կտրվածքով), ամիսների, տարվա եղանակների անունները (մեկ տարվա շրջանակներում), ինչպես՝ **հինգշաբթի, սեպտեմբեր, գարուն**: Տեսական ժամանակի ընթացքում, բնականաբար, թվարկված իրողությունները կրկնվում են, և մասնավորապես շաբաթվա օրերի և տարվա եղանակների անունները կարող են գործածվել հոգնակի թվով:

Ոճական է նաև թվականների գործածությունը հոգնակիով: Քերականական այդ ձևերը ցույց են տալիս՝ ա) թվանշանի անունը, բ) տվյալ թիվն ունեցող առարկա, գ) առարկաներ, որոնք տվյալ թվային կարգն ունեն: Եվ կարող ենք բազմաթիվ վկայություններ բերել, որտեղ լինեն **երեքներ, հարյուրներ, հազարներ, միլիոններ, չորրորդներ** և մնան այլ ձևեր: Հարց է, այս դեպքում որևէ նշում պիտի արվի՞, թե՞ ոչ:

Անուն խոսքի մասերի թվի կարգի հետ կապված խնդիրներն իրականում շատ ավելին են, եթե քննենք մասնավոր դեպքերը: Սակայն արծարծված հարցերը սկզբունքային են, անհետաձգելի և ամենակարևորը՝ լուծելի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Ս.Գ. և ուրիշներ, Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Երևան, 1974:
2. Աղաջանյան Զ.Խ., Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Երևան, 2007:
3. Աճառյան Հր., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ.3, Երևան, 1957:
4. Ասատրյան Մ.Ե., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հ. Ա, Երևան, 1970, հ. Բ, Երևան, 1973:
5. Բեդիրյան Պ.Ս., Հայ լեզուն և մեր խոսքը, Երևան, 2007:
6. Գյուրջինյան Գ.Ս., Անուն խոսքի մասերի թվի կարգը արդի հայերենում. քերականական
7. քառարան-տեղեկատու, Երևան, 2005:
8. Խլղաթյան Ֆ.Հ., Ժամանակակից հայոց լեզու, պր. Գ, Երևան, 2006:
9. Մարգարյան Ա.Ս., Հայոց լեզվի քերականություն. ձևաբանություն, Երևան, 2004:
10. Մկրտչյան Ռ.Խ., Ժամանակակից հայերենի ձևաբանական ոճաբանություն, Երևան, 1992:
11. Պետրոսյան Հ.Զ., Գոյականի թվի կարգը հայերենում, Երևան, 1972:
12. Ջահուկյան Գ.Բ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974:
13. Ջահուկյան Գ.Բ., Խլղաթյան Ֆ.Հ., Հայոց լեզու 9, Երևան, 1998:
14. [www. canc.net](http://www.canc.net)